

Է.

Կ Ա Ր Ա Պ Ե Տ Վ . Մ Ե Լ Ի Ք Ե Ա Ն

ՀնձեՑԻ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԻՖԼԻՉԻ (1736—1790)

Ալլահվերտեան կաթողիկէ հայ գերդաստանին ծագման պատմական եւ ճիշդ տեղեկութիւններու սկիզբը մինչեւ 1600 կը հասցընէ զմեզ, երբ նախահայրերէն մին Սահակ եւ յաջորդները Թորթում գաւառէն Կարնոյ Հինձք գիւղը, եւ ասկէ Կարին եւ յետոյ ասկէ Կ.Պոլիս անցած հաստատուած են: 1670ին ծնած Սահակայ որդի Աստուածատուր՝ տուած է գերդաստանին իր անունն՝ Աստուածատուրեան, որմէ յետոյ՝ արդէն Կարնոյ մէջ գտնուած միջոցնին, գերդաստանը Թարգմանաբար կոչուած է Ալլահվերտեան: Պատմութեան աւելի ծանօթ, եւ իրենց ազգագուտ գործերով հռչակաւոր եղած են՝ Մանուկ (ծն. 1756) եւ Մատթէոս (ծն. 1764) հարազատներն, որոնք 1800ի առջի տարիները Պոլիս փոխադրուած՝ մեծ դեր ունեցած են ազգային շատ խնդիրներու մէջ, օր. Էջմիածնի Դաւիթ կաթողիկոսին գլխաւոր հակառակորդներէն եղած են երկուքն ալ, ինչպէս կը յիշէ նոյն Դաւիթ՝ Կ.Պոլսոյ Յովհ. Պատրիարքին 1803ին գրած նամակին մէջ, զանոնք